



ՀԱՏՈՐ ԻԷ.

1889

ՆՈՅԵՄԲԵՐ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ԿԱՐԾԵՑԵԱԼ

ՎՈՐԻԱՎՈՒԻ ԶԱՌՆ

ՅԻ Ս. ՅՈՎՀ. ԳԱՐՍՍՅԱՅԻ



ԵՅԵՐՈՐԳ, ամենէն աւելի շօշափելի և ամէն տարակոյս փա-
 րատող փաստն, թէ ստուգիւ այդ ճառը չկարէ լինել Խո-
 րենացւոյ՝ հետեւեալն է. այսինքն է, այս ճառիս մէջ կան
 բազմաթիւ տեղիք, որք ուղղակի Դամասկացւոյն վարդա-
 վառի ճառին՝ հետևութիւնք են և անտի միայն կարող են
 փոխ առեալ լինել, որուն վերնագիրն է. Λόγος εις τήν
 ὑπεριένδοξον Μεταμόρφωσιν τοῦ Κυρίου ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ.

Յիրաւի, երկաքանչիւրին սկզբնաւորութիւնն իսկ նման է, գրեթէ
 բառ առ բառ. զի երկաքանչիւրն իսկ գերապանծ լուսով ճառագայ-
 թեալ զուարթ կը տեսնեն զժողովս հաւատացելոց 'ի Քրիստոս, և
 կը հրաւիրեն զնոսա՝ համաձայնելով ընդ հրեշտակս՝ կատարել զտօնն
 մեծ և խորախորհուրդ. Երկաքանչիւրին վերջաբանն ևս՝ մի և նոյն
 հակիրճ յորդորակով կ'աւարտի. այսինքն է, կարծեցեալ Մովսէսն՝
 յէջ 337, և Դամասկացին յէջ 804՝ կը յորդորեն տէրունական լու-
 սով պայծառացեալ ժողովուրդը՝ թողուլ զերկրաբար յարմնոյս տա-
 ղաւարն և պատրաստուիլ Քրիստոսի վերջին գալստեան, որպէս զի

1. Joannis Damasceni Opera omnia, Parisiis. 1712, p. 791. Այս ուպադրու-
 Թեան համեմատ պիտի լինին յեջաատկութիւնք տեղեաց:

հրեշտակաց հետ յափշտակուելով յօդս ընդ առաջ Տեառն՝ աստուածացեալ կերպիւ թագաւորեսցեն ընդ նմա 'ի յաւիտեանս։ Առ Մովսիսի, յէջ 329, օր ցնծութեան, ծագման մեծի փառացն Աստուծոյ և միաշարժութուն կ'անուանի վարդավառն. նոյնը կ'աւանդուի և յէջ 793 և 799 առ Դամասկացւոյ ի մի և նոյն էջն՝ Մովսէս իրարու հետ կը բաղդատէ հին կտակարանի տաղաւարահարաց տօնն՝ ընդ տօնի նորոյս կը տակի. նոյնպէս կը գտնենք և՛ առ Դամասկացւոյ յէջա 793 և 799, Յէջն 330 առ Մովսիսի առաջին տեղին, յորում մարմնոյս սզողիչ տղամաշաղխս ախտերն՝ իմանալի եզիպտոսի կը նմանցուին, և կ'ըսուի՝ 'ի բաց թողլով զանոնք՝ բարձրանալ 'ի լեառն առաքինութեանց, — երկրորդ տեղին՝ յորում կ'ըսուի, թէ տեսնելով Աստուծոյ փառքն իբրև ընդ հայելի կը կենդանակերպինք, և թողլով զնիւթական շինուած կենցաղոյս՝ կը փութանք յաննիւթն, մեր մարմիններն առաքինութեան խորան յարդարելու համար, — և հուսկ երրորդ տեղին, յորում կ'ըսուի, թէ անմարմին առաքինութեանց աճմամբ կը լինիւք նման հըրեշտակաց, և կը հրաւիրուիմք յերկիրն աւետեաց 'ի Սիոն քաղաքն Աստուծոյ, ուր տօնողացն է ինդութիւն յարազուարժ, նման են առ Դամասկացւոյ յէջա 794 և 799 տեղեաց հետ. միայն թէ հայկազն հեղինակը մերթ ըստ կամս ընդլայնած է և մերթ կրճատած զտեղիս յոյն վարդապետին. և այս վարժունքս նշան է, թէ կամ նա չէ ուզած ծառայարար նմանող երեկի, և կամ ուզած է ծածկել զայն։ Եւ իրօք այս բանս դեռ աւելի զգալի կերպով կը տեսնուի միւս տեղեաց յառաջերութեան մէջ, զի որ ինչ Դամասկացու ճառին առաջին էջերում կը գտնուին, նա իւր ճառին վերջին կամ միջին էջերուն մէջ զետեղած է երբեմն ըստ պահանջելոյ նիւթոցն և դասաւորութեան նոցա. և երբեմն այլ սորա հակառակը գործած է։ Դարձեալ, նոյնբան տեղիք՝ որ առ Դամասկացւոյն կրկնուած են տարբեր պարագայից մէջ, նոյնը կատարուած կը տեսնուի և առ հայոցն։ Արդ այս դերս, եթէ բնական կերպով խաղաղած համարինք 'ի հեղինակէն և եթէ մասնաւոր հնարիմացութեամբ մի, ճառիս նախաբանութիւնն և վերջաբանութիւնն, ինչպէս տեսանք, նորա դիմակը վար կ'առնեն և կը ցուցնեն մեզ, թէ նա Դամասկացւոյ պարունակէն զուրս ելած չէ, այլ այնու սկսած և այնու ուզած է աւարտել իւր ճառը։ Թէպէտ և կան մէկ երկու տեղեր, որք Ոսկեբերանի և Ս. Լևոնի Մատթէի Մեկնութեան տեղեաց հետ նմանութիւն ունին. բայց պէտք է դիտել, որ կարծեցեալ Մովսէսն՝ ուղղակի Դամասկացիէն օգտուած է, առ որ կը գտնուին Ոսկեբերանի այդ տեղիքն։ Յիրաւի, ըսածիս ապացոյց են դեռ Դամասկացիէն փոխ առնուած ուրիշ տեղիք, զորս կարելի չէ գտանել առ Ոսկեբերանի. այլ իբրև ազատ և հատուկտիր թարգմանութիւնք համարելի են Դամասկացու ճառին։ Յէջն 334 Ա. պարբերութեան մէջ, որ կը սկսի « Այսպիսի մեզ յօրինակ տպաւորեալք »

բառերով, առաջին երկու տեղիքն՝ որոց միոյն մէջ կը ծանուցուի ֆրիստտսի անմերձենալի լուսոյն իւր աշակերտաց դիմաց յայտնուելըն և միւսոյն մէջ Թաբոր կը նմանցուի սուրբ լերին Սինա, նոյն են գրեթէ բառ առ բառ Դամասկացւոյ յէջս 791, 793, 794 և 799 տեղեաց հետ: Մի և նոյն իջում երրորդ տեղին, յորում Մովսէս մարգարէն կը բերուի ՚ի հանդէս իբրև նախահայելի արեգականն անորակի, և եղիա՝ հրեղէն կառօք վերացեալ կուգայ ՚ի կենդանեացն վայրէն յողջոյն ֆրիստտի՝ այլովքն հանգերձ, համաձայն է Դամասկացւոյ 791 793, և 802 էջերուն տեղեաց հետ: Թէջս 335 և 336 երկու տեղիքն յորս կ'աւանդուի, թէ առ Մովսիսիւ Սինայ լեռան վրայ երևցած տեսիլն և հին օրինաց տուչութիւնն՝ օրինակ էին ֆրիստտսի պայծառակերպութեան և տուչութեան օրինաց Աւետարանին, և թէ ֆրիստտս Առաքելոց ձեռքով զհինն ՚ի նորս փոխեց և զստուերն՝ ՚ի լոյս, նման են Դամասկացւոյ յէջ 802^Ձ ԺԶ և ԺԷ թուահամարի տեղեաց հետ: Թէջ 332 առաջին տեղին՝ ուր Առաքեալն Պետրոս մեծ հազարապետ եկեղեցւոյ կը կոչուի, փակող և բացող արքայութեան և յայտնող խորհրդոյ երրորդութեան, — և երկրորդն՝ յորում որդիքն Որոտման իշխանք աշխարհաց կը կոչուին, այնու զի արբին զբաժակն մահու՝ յանմահութիւն և արբուցին այլոց, նման են Դամասկացւոյ յէջս 795 և 797 տեղեաց հետ: Մի և նոյն իջում հետեալ երկու տեղիքն, յորոց միոյն մէջ կը նկարագրուի աստուածային և մարդկային բնութեանց անբաժանելի և անշփոթ միաւորութիւնն ի ֆրիստտոս, և միւսն՝ յորում կ'ըսուի, թէ Բանն մարմնացեալ զհայրական փառաց ճառագայթն փայլեցոյց ՚ի կենդանարար մարմնոյն, և թէ նա է բնութիւն Հօր, ի Հօրէ, լոյս ՚ի լուսոյ և կերպարան էութեան, բառ առ բառ նոյն են Դամասկացւոյ 792, 799 և 803 էջերուն տեղեաց հետ: Թէջ 332 — 333 յորում կ'ըսուի, թէ կոյնն Յիսուս իբրև անփոփոխելի լուսոյն ճառագայթ, փոփոխականան փայլատակեց նիւթով, և ՚ի կուտէն հըրաշաբուսեալ անապական գործեց զհօգի և զմարմին մարդկային, և աստուածախառնութեամբն՝ գոլով ՚ի յերկրի՝ մնաց անանջատ ՚ի Հօրէ, նոյն են Դամասկացւոյ 792 և 799 էջերու տեղեաց հետ: Թէջ 333 առաջին տեղին՝ ուր կ'ըսուի վասն ֆրիստտսի, « վասն զի ամենայն ելով լի են նովուս երկինք և երկիր » և այլն, նոյն է Դամասկացւոյ յէջ 800 տեղւոյն հետ. երկրորդ տեղին՝ յորում ֆրիստտոս գերակատար լրութեամբ անհատ միութիւն, կը փայլէ զաղբերացեալ ճառագայթս Աստուածութեան՝ յաստուածացեալ մարմնոյն իւրմէ, փաբատելով մեր բնութեան խաւարը, նոյն է յէջս 799 և 800 տեղեաց հետ. — երրորդ տեղին՝ յորում կ'ըսուի թէ ֆրիստտոս ելանելով ՚ի լեւուրն ՚ի վեր տանէր զմեզ ՚ի հայրական աթոռն, — և հուսկ չորրորդ տեղին՝ յորում կ'աւանդուի, թէ հայրական ձայնին կոչմամբ և պայծառակերպութեամբն յայտնեցաւ ֆրիստտոս իբրև Տէր կենդանեաց և

մեռելոց և յայտնեց զվերջին գալուստ իւր, նման է Գամասկացոյ յէջ 800՝ ԺԻ Թուահամարով հատուածին հետ: Յէջ 834 զգալի արեգական և ֆրիստոսի նմանաբանութեան, այլակերպութեան և անկէ յառաջ եկած բիւր բարեաց նկարագրութիւնքը նման են Գամասկացոյ յէջ 799՝ ԺԲ Թուահամարով պարբերութեան և յէջ 723 Գ Թուահամարի վերջին պարբերութեան հետ:

Արդ Մովսիսի կարծեցեալ վարդավառի ճառին և Յովհ. Գամասկացոյ Այլակերպութեան ճառին նման կամ հասարակաց տեղիքն էջ առ էջ մատնանիչ ընելէն վերջն, զնեղք գէթ զմանս դիմացէ դիմաց՝ այլոց ևս բաղդաստութեան արգիւնքն ակնիւրե ցուցանելու համար: Բայց նախ կը փութամ ծանուցանել, թէ երկաբանչիւրոց մէջ եղած նմանութիւնն սուելի զգալի կը լինէր, եթէ ըստ յունարէն բընագրին մէջ բերուէին Գամասկացոյ տեղիքը: Բայց բաղմաց մատչելի լինելու համար՝ ստիպուած եմ ըստ լատիներէն թարգմանութեան զնել աստ:

ՄՈՎՍԷՍ

Յ. ԴԱՄԱՍԿԱՅԻ

« Գերազայծառ ճառագայթեալ լուսով ընդհանուր զուարթ և ուրախ տեսանեմ զհաւատացելոցդ գումարեալ զֆրիստոսաւէր դաս: Նորահրաշ արփիափայլ լուսով պրակեալ՝ զտօնիս յաւէտ հրաշացուցանել պայծառ ձայնիւ դիորհուրդ, զարթուցանել ընդ մեզ յերգս ցընծութեան և զվերինն Սիսվնի գերկնադումար զպարս... վասն զի ամենայն ինչ՝ ՚ի բարի տօնիս ՚ի միասին գեղեցկապէս ընթացեալ զընաս զուարճացուցանեն զմիտս »:

« Արդարեւ սա է օր ցնծութեան և ուրախութեան՝ զոր արար տէր. սա է օր ծագման մեծի փառացն Աստուծոյ, որ է նոր արքայութեան սկիզբն և տեսչութիւն յուսոյն յաւիտենից »:

« Լքանելով մեր գիմանայի Եգիպտոս, զողողողն ասեմ՝ մարմնոյս ՚ի խաւարարեակ աղտեղութեանց ախտից տիղմ, ՚ի հոգևորն բարձրանամք աստուածգիտութեան լեռն »: —

« Ի նմա գիտանն Տեառն իբրև ընդ հայելի տեսեալ՝ ՚ի նոյն լուսոյ

« Agedum, o religiose coetus, hodiernum hunc diem celebremus. Hunc diem festum cum supernis, quae festis gaudent, agitemus! Huc enim nobiscum festi celebrandi gratia venerunt. Agedum labiis velut in cymbalis bene sonantibus jubilemus. Age spiritu exultemus. Cui enim festum et laeta celebritas? cui voluptas et exultatio? nisi qui Trinitatem colunt ».

« Haec rerum conditarum exultatio, hoc hominum decus, atque ejusmodi glorificatio; o admirabile consilium ejus qui hominem principii expertem exhibuit ».

« Excussa vitiosarum affectionum turba, dignique tandem promissionibus facti ad virtutum montem ascendamus ».

« Nos autem revelata facie gloriam Dei speculamur, a claritate

կենդանակերպիժք, և փառաց 'ի փառքս ճառագայթեալ —

«Օրինարիժք զկենցաղոյս լքանի, ինքնական չինուած՝ և յաննիւթն փութացեալ յարկ՝ զքակտելիս զայս մարմնոյ անզանս առաքինութեան յարդարել խորան»:

«Այտրիկ մեզ յօրինակ կանխաւ տպաւորեալք, զոր ինքեամբ ելից՝ որ լուծիչն է գրոյն՝ Քրիստոս և կատարիչ խորհրդոյն, 'ի սմին աւուր տօնի աշակերտացն 'ի իրինն անմեքձնեալի զաստուածութեանն նազելի փառացն յայտնեաց զծայրագոյն լուսոյ ծագումն»:

«Ի կենդանարար աղբերացեալ մարմնոյն փայլակնատարած ճառագայթարձակ»:

«Իւ էր տեսանել զՅարոր նոր ոմն Աննա լեռան սուրբ, և վայր աստուածաբնակ լուսեղէն, վառեալ հրով և ամպով, այլ և երկին նոր 'ի վերայ երկրի բարձրացեալ աստուածութեան ճառագայթիք: Ի նմա և զօրք հրեշտակաց... որք 'ի ներքոյ տէրունոյն ոտից ստկացեալ՝ հրափայլ թևօք պարփակեալ զօրրայական աթոռով: անդ և պարք պարբրանկացն և պայծառ և մեծ առաքելոց և մարգարէից լուսազգեսց հպաւորութեամբ անմեքձնեալի լուսոյն աստուածակերպեալք»:

«Արդ Մովսէս նախահայելի արեգականն անորակի և անմատոց լուսոյն առաջին ծագումն 'ի մեզ փառացն Առտուծոյ, զտեսնչալին իւր տեսեալ լոյս մարմնոյ ծածկեալ վարագուրաւ»:

«Յնծացեալ յարութեամբ եկեալ ողջունէր նոյնահրաջ կերպիւ, աւետաւորելով մեզ 'ի նոյն կենդանակերպիլ 'ի նորագումն Արտուածորդոյն յարութեամբ, զնա վկայեալ մահու և կենաց Տէր: Եւ Եղիա հրոյն վերամբարձեալ կառօք 'ի կենդա-

in majorem claritatem, tamquam Domini Spiritu ».

«Quapropter operæ prætium est, ut terrenis terrae relictis, superatque humilitatis corpore, ac sublimissima divinaque caritatis consensâ speculâ, ea demum, quæ aspectum omnem superant, intueamur ».

« Quam figuris olim edoctus fuerat (Moses), hodie Jesus Christus veteris ac novi testamenti Dominus, inaccessibleis lucis abyssus, divinique splendoris incircumscrippta effusio, in monte Tabor apostolorum perstringit oculos ».

«Mortale corpus Deitatis gloriam fontis instar effundens ».

« Nunc autem Tabor exultat et gestic divinus et sanctus ille mons, nec minus gloriæ et splendoris ratione, quam ingenti sua celsitudine sublimis. Nunc jure gaudet, ut cum coelo gratiæ ornamentis certet. Nam in quem illic angeli immotam oculorum aciem intendere non valent, hunc relecti Apostoli regni sui gloria collucentem in isto monte conspiciunt.

« Hodie veteris testamenti auspex divinusque legislator Moses in monte Tabor legum conditori Christo more tanquam hero adstat . . . et jam Deitatis gloriam liquido perspicit, sub foramine petræ (այս ինքն է մարմնոյ) protectus ».

« Hic mortuorum resurrectionis fides adstruitur, ac Christus mortuorum et vivorum esse Dominus declaratur, accepto quidem ex mortuis Moyse, adhibitoque teste Elia adhuc vivente, qui jam olim igneo curro subvectus in ætheream regio-

նեացն վայրէ յողջոյն եկեալ մերա-
տիպ էական լուսոյն :

« Անդ Հազարապետն մեծ Հայրա-
կան խորոցն՝ փակողն և բացողն վե-
րին արքունեացն լուսոյն առագաս-
տեալ խորանան՝ զԵրրորդութեան
պակուցեալ վերածայնէր զխորհուր-
դոն » :

« Բանն մարմնացեալ զՀայրարուն
փառացն էական ճառագայթ անդա-
նոր փայլեցոյց 'ի կենդանարար տը-
նորինցելոյ մարմնոյն, վասն զի ընդ
իր միաւորեաց զմարմին » :

« Որպէս է ասել 'ի Հայր և 'ի Հօ-
րէ Աստուած Բան, էն յէականէ
անտի... որ էն և միշտ է՝ պատճառ
ունելով զմիշտ էն » :

« Նոյն բնութիւն Հօր, ճառագայթ
փառաց, կերպարան էութեանն և
պատկեր բարերարութեան » :

« Վասն զի միացաւ 'ի մարմնի բը-
նութեամբ ընդ ինքեան զնա խառ-
նելով և աստուածացուցանելով, կա-
լով որպէս էրն, ոչ շփոթեալ և ոչ
անխառն մնացեալ, այլ և խառնեալ
և միացեալ անշփոթարար և անբա-
ժանելի 'ի վեր քան զմտածութիւն
էիցս » :

« Վասն զի ամենայն ելով լի են
նովաւ երկինք և երկիր. որ անդրն
է քան զամենայն, ընդ ամենայնս
մեր ճանապարհորդեաց հոգեկան և
մարմնական կիրս առանց մեղաց և
ապականութեան » :

« Եւ ութերեակ՝ վասն միոյ մեծ
և աներեկ աւուրն... (Եւ տօ-
նեմք) զեօթնեբեակն... որ է, զբոլորս
զայս եօթնեակ շրջագայութեան կե-
նաց հղովս » :

nem fuerat... viventium cœtum
veluti quadam refert imagine ».

« Qui te coelestis regni clavige-
rum creavit, qui tibi ligandorum
solvendorumque peccatorum potes-
tatem dedit, quem tu divino ore
Filium Dei vivi verè prædicasti ».

« Quanquam enim ex Patre, attamen sine initio et tempore suam ipse gloriæ claritatem habet; atque assumpta carne idem est... tametsi ergo nunquam sanctum illud corpus divinæ expertæ gloriæ fuit, sed a primo hypostaticæ unionis Deitatis gloria perfecte locupletatum est ».

« Ex me genitore prodiit, ex me et mecum semper est, nec existentia posterior. Ex me ut Paterna causa exque mea substantia et hypostasi genitus »;

« Patris utique substantiale Verbum, ille gloriæ splendor, ille naturalis Dei ac Patris substantiæ character ».

« Nam et Verbum caro factum est, et caro Verbum facta, etsi neutrum a horum sua natura descendit. O miraculum mentem omnem superans! Quonam pacto quæ misceri nequeunt, inter se miscentur, et tamen ab omni confusione libera manent... unum sint unaque hypostasis, indivisionis experte distinctione et inconfusa conjunctione ».

« Caeterum Deitas, quæ in omnibus est, et ultra omnia, nequaquam capi potest... At vero vincit divinitas, ut ipsa interim inter passionum passio maneat ».

« At vero octonarius idcirco adhibetur, quia futuri aeri figuram gerit. Etenim septem sæculis presens ævum concluditur »:

« Իսկ մեր զաստուածահրաշ լուսաւորութիւնացս սօնախմբեալ զոր՝ կնքեսցուք զբանս. պայծառազգիաց պսակեալ լուսով փառացն Քրիստոս սի... արարչականն սպասաւորեսցուք տնօրէնութեան, զլուծանելի մարմնոյս տաղաւար՝ մարտութեան առնել խորան, յորում՝ զմի և զնոյն Քրիստոս ընդունելով, զԵրրորդութեանն ՚ի սիրոս մեր անպարագիր ընկալցուք լուսաւորութիւն. և սապէս ընդ լուսերամից յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօգըս զուարթ և պայծառ... զորդէ գրութեանն առեալ պարզես ընդ Թագաւորեալն ՚ի լոյս ՚ի նոյն ինքն ՚ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ո.րում փառք յաւիտեանս յաւիտե. տենից ամէն »:

«Hæc divina præcepta quam diligentissime custodiamus, ut nos etiam ex divina ejus pulcritudine delectemur, suavissimo ipsius gustu animos nostros exsaturantes: nunc quidem quantum assequi possunt, qui terreno hoc corporis tabernaculo gravantur; post autem clarius et quando fulgebunt justi sicut sol, corporeisque necessitatibus liberati, tanquam angeli cum Domino immortales erunt, in magna et illustri revelatione ipsius Domini ac Dei et Salvatoris nostri Jesu Christi, cui gloria... in saecula saeculorum. Amen.»

Արդ, երկուտեք մէջ բերուած տեղեաց, մանաւանդ թէ այդ ճառե. րունբըին բովանդակութեան և արասքին հանգամանաց մէջ երեւցած նմանութիւնն՝ ակնյայտնի մի ճշմարտութիւն լինելով, այժմ կարելի է եզրակացնել, թէ կամ այդ ընդհանուր երևոյթն դիպուածական մի բան համարելի է. և կամ ընդ հակառակն սակ, թէ վարդավառի ճառին հեղինակն՝ ոչ եթէ Մ. Խորենացի, այլ կամ մի ուրիշ Մովսէս պէտք է որ եղած լինի, և կամ անանուն հայ վարդապետ մի. որուն ճառն ապա Խորենացուն վերագրուած է, կամ զքերթողահայրն Հայոց, և կամ լաւ ևս՝ մի և նոյն ճառը աւելի ժողովրդական ընելունպատակաւ. Էս վերջին համոզմունքն ունիմ, ՚ի նկատի ունելով նախ ընթացաբար մէջ բերուած միւս փաստերն ևս. որոնք այն ժամանակ միայն կարող էին ապարդիւն լինել, եթէ մէկ կողմէն ապացուցուէր, թէ, Ե. դարուն ևս այդ ճառի լեզուն և բառերն կարէին գործածուած լինել. և միւս կողմէն ալ ապացուցուէր, թէ յանուն Յ. Դամասկացոյ մեզի հասած Այլակերպութեան ճառը՝ մի ուրիշ երիցագոյն յոյն սուրբ Հօր երկասիրութիւն է: Սակայն այս երկու կէտերն ևս ոչ են ապացուցանելի: Առաջնոյն պատճառն՝ արդէն ի սկզբան ծանուցաւ, և հայերէն լեզուին հմուտ եղողները քաջ կիմանան զայն: Նկատմամբ երկրորդ կէտին, յիշաւի եղան ոմանք, որք կոմբէֆիսի՛ հետ Յովհաննու երիցու Անտիոքացոյ ուղեցին ընծայել զայն. որովհետև Սեզուերիանոսի ձեռագրի մի մէջ այդպէս գրուած է: Սակայն այս փաստս առանց հիման է, որովհետև զա.

1. Bibliotheca Patrum concinnatoria, De Domini Transfiguratione.

նազան մատենագորաններու մէջ գտնուած բոլոր միւս ձեռագիրք՝ Դամասկացւոյ կ'ընծայեն զայն այսպէս. Τοῦ ἐν ἀγίου πάτρος ἱμῶν καὶ μακαριώτατου μοναχοῦ καὶ πρεσβυτέρου Ἰωάννου τοῦ Δαμασκηνοῦ λόγος, և այլն. Բ. Լեզուն իսկ և ոճ գրութեան Դամասկացւոյն յատուկ է և նորա միւս վարդապետական ճառերուն համանման. Գ. յէջ 796 Աւետարանի մէջ Յովհաննէսի համար զուրցուած քրիստոսի այս խօսքը, թէ « Կացցէ դա մինչև ես գամ » մէջ բերելով կը հերքէ Եփրեմ Անտիոքացւոյ մոլորութիւնն. իսկ Եփրեմ որովհետև կապրէր յամին 545. ուրեմն ճառիս գրողն՝ այդ թուականէն շատ տարիներ վերջ պէտք է որ լինէր. Դ. յէջ 795 առ պետն Առաքելոց Պետրոս ուղղեալ ներքողխառն մաղթանքին մէջ կ'ըսէ. « Խնդրէ քու աղօթիւքդ, որպէս զի հերետիկոսաց բերանը կարկի, որոնք յարուցեալ են 'ի վերայ Եկեղեցւոյ. որպէս զի դադրին խառվայոյզ մրրիկք և դառնայ մեզ անբոյժ խաղաղութիւն »: Դիտելու է, որ այս խօսքերով Դամասկացին պատկերամարտից՝ ուղղափառ Եկեղեցւոյ դէմ յարուցած հալածանքներն և նեղութիւնները կ'ակնարկէ, որոնց դէմ գրեց իսկ իւր զոյգ մի ջատագովութեան ճառերն: Իսկ գալով Մովսիսի կարծուած ճառի ոճոյն առանձնայատուկութեան, ըսելու է, թէ մասամբ Դամասկացւոյ նմանողութեան արգասիք է, մասամբ այլ այն գարուն յորում գրուեցաւ:

Այժմ՝ այս հարցս ընդ առաջ կ'իյլէ մեզ. Արդ եթէ Մ. Խորենացի չէ այս ճառիս հեղինակն, ում արդեօք կարէ լինել այն և յորում ժամանակի. Հեղինակը որոշելն ամենադժուարին է. սակայն ըստ իս Ը-ժ դարուց պարունակին մէջ կարելի է միայն զետեղել, որովհետև ինչ առանձնայատուկութեամբք և ինչքան որ կը տարբերի ճառիս լեզուն և գրութեան ոճը Ե դարու գրութիւններէն, նոյնչափ ևս կը տարբերի ժԱ և ժԲ դարուց գրուածոց լեզուէն և գրութեանէն. այս բանս խիստ յայտնի է, և բաղդատելով Սարկաւագի և Ն. Լամբրոնացւոյ կրկին ճառերուն հետ՝ գիւրաւ զգալի կը լինի: Արդ բարդ բայից և բանից կիրառութեամբ՝ Յովհ. Օձնեցւոյ ճառերուն կը նմանի. իսկ նախադասութեանց կազմութիւնք, դարձուածք բանից և խրթնութիւնք՝ ամենէն աւելի Պրիսիղայ հայերէն թարգմանութեան հետ կարելի է զուգել: Արդ թարգմանութեանս հեղինակն եթէ զՄ. Սիւնեցի համարիցի ոք, եթէ զՅովհ. Օձնեցի և կամ զԳ. Նարեկացին, հաւանական է, որ նոյնը եղած լինի և հեղինակ վարդավառի ճառին: Առաջնոյն անունն և Քերքուրանայր մականունը, որչափ որ քաջ կը յարմարին ճառիս, որուն հեղինակը Մ. Քերթողահայր կը կոչուի և ոչ թէ Խորենացի 'ի վերնագրին, բայց այնքան ևս ժամանակն անյարմար կը տեսնուի. որովհետև Դամասկացին յամին 730 հրաժարելով յարքունի գործոց՝ առանձնացաւ 'ի վանս Ս. Սարայ և հաւանօրէն յետ այնորիկ գրեց իւր Այլակերպութեան ճառը. իսկ Մ. Սիւնեցին

յամին 720 արդէն իսկ վախճանած էր, ըստ վկայութեան Ստեփանօսի Սինեցոյ պատմութեան. զի յայսմ ամի կը դնէ զԵպիսկոպոսութիւն յաջորդի նորա, այսինքն է Անանիայ: Ուրեմն կը մնան վերջին երկուքը: Երկրորդին 'ի նպաստ կարելի է համարել յէջ 327 և 332 կրկին տեղերն՝ յորս գովեստիւք կը յիշուի «հաւատոյն արմատ և աղբիւր թարեթանեալն Աստուծահին» այլովք հանդերձ. իսկ Առաջնոյն նպաստող են ֆրիստոսի միոյ անձնաւորութեան և երկուց ընութեանց մասին ըրած որոշ վարդապետութիւնքն 'ի բազում տեղիս, որք քաջ կը միաբանին իմաստասէր վարդապետին գրուածոց մէջ ըրած վարդապետութեան հետ:

Հ. ԲԱՐՍԵՆ ԱՐԳԻՍՏԱՆ

ՃԱՆԱՊԱՐԶՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՆՆ ՄԱՍԻՈ

(Տես էջ 273. Շարունակորդան և վերջ.)

Թէպէտ ճանապարհնիս խիստ նեղացուցիչ էր և լեռան կողմ սաստիկ զառիվայր, սակայն մենք ամենայն հրազութեամբ կը թռչէինք դէպ 'ի վար՝ քարէ քար ցատքելով, և գրիթէ յանդգնորէն զիմագրաւելով 'ի վտանգ կորստեան: Պապա առաջնորդնիս գեռ ևս ճամբայ չելած՝ յորգործց զիս չոր մնացած զգեստներէս մի քանիսն հանել վրայէս, ըսելով թէ այնպէս աւելի զիւրին կը լինէր էջն, որուն անկարելի էր ընդգիմանալն. իսկ ինքն փութաց օգուտ քաղել տուած խորհրդէն, և իսկոյն առնելով զգեստներս զլխուն վրայ փաթաթեց՝ փոխանակ զլխանոցին, զոր վարը մուսայցել էր:

Իջնելու ժամանակնիս պատահեցան նաև մի քանի վատ զիպուտներ: Մանուկով խաղախն՝ ձեռն բաւական ընդարձակ գաշտակէ մը անցնելու ժամանակ կորսնցրնելով մարմնոյն հաւասարակշռութիւնը վար զլորեցաւ սահուն մակերևութին վրայ. բարեբաղդարար գաշտուն շատ խոր չըլլալով՝ ամենևին չմտատուցաւ: Նոյն տեղէն ոչ ինչ հեռի՝ արագարագ ընթանալու միջոց՝ ալ ոտս ժայռի մը ճեղքին մէջ մտնելով, քիչ մնաց որ ոտս չըլէր: Իւ մինչեռ կ'աշխատէի դուրս հանել զայն վտանգաւոր ճեղքին մէջէն, լըսեցի ետևէս զայրազին բացազանչութիւններ: Իսկոյն դարձայ նայելու թէ ինչ բան է, և տեսայ որ Պ. Պոպով արագարագ վազելու միջոց ուշադրութիւն չընելով տեղոյն անձկութեան, ինկիւր մնացել էր գրիթէ գամուած հրկու մեծամեծ քարանց մէջ և կը ջանայր դուրս ելնել անտի: Վերջուպէս նոյն ատուր հինգերորդ ժամուն հասանք նախնիթաց ատուր գիշերելու տեղերինս, ուր արդէն կը սպասէր մեզ կանուխ պատրաստուած թէյն: Զիւնըն տակաւին կը շարունակէր գալ, հովն զգալի կերպով նուազել էր: Թէպէտև թացութիւնն բոլորովին թափանցել էր մեր զգեստուց մէջ, սակայն